

Տառք միայն ձև չէ. Ցուցադրություն Հայաստանի ազգային գրադարանում



Տառարվեստում առանձնահատուկ տեղ ունեն հայկական այբուբենի գեղագրության և զարդագրության ոլորտները: Միջնադարյան հայ վարպետների, ծաղկողների ու մանրանկարիչների գործերում պատկերված են հայ զարդագրության բազմաթիվ տեսակներ ու ենթատեսակներ: Առավել տարածված են թռչնագիրը,

կենդանագիրը, ապա՝ մարդագիրը, առասպելական կամ մտացածին կենդանիներով ձևավորված գրերը:

Հունիսի 21-ին Հայաստանի ազգային գրադարանի Թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում բացվեց հայկական տառատեսակների և տառարվեստին վերաբերող գրքերի ցուցադրություն: Ներկայացվեցին տառաստեղծ, դիզայներ Էդիկ Ղաբուզյանի և Գեղարվեստի ակադեմիայի ուսանողների աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուից տառարվեստի էվոլյուցիան արտացոլող եզակի նմուշներ, որոնք ի դեպ ոչ միայն ցուցափեղկերում էին. կադրերը



ցուցադրվում էին նաև սրահի սյուների
և առաստաղին:

Ցուցադրության մեկնարկը տվեցին
Ազգային գրադարանի տնօրեն Հրաչյա
Սարիբեկյանը, Գեղարվեստի
ակադեմիայի պրոռեկտոր Միկա
Այվազյանի և դասախոս, դիզայներ Էդիկ
Ղաբուզյանը:



«Ցուցահանդեսին որոշեցինք ներկայացնել «Գրանշան» ոչ լատինական
տառատեսակների և Խարկովի գեղարվեստի պետական ակադեմիայի
տառատեսակների միջազգային մրցույթներին մասնակցած և հաղթած մի շարք
աշխատանքներ», - նշեց Էդիկ Ղաբուզյանը՝ ավելացնելով, որ հայոց այբուբենը
տառատեսակների մշակման բազմաթիվ հնարավորություններ է տալիս: Նրա խոսքով,
Հայաստանում շատ են տառարվեստով հետաքրքրվող երիտասարդները, ստեղծվում են
ուրույն ոճով նոր գրատեսակներ, որոնք լիովին կիրառելի են և՛ ժամանակակից
տպագրության մեջ, և՛ համակարգչային աշխարհում:

«Յուրաքանչյուր ազգի գիր ազգի ինքնության դրոշմը ունի: Մարդը դառնում է
տառաճանաչ, սկսում է գրել և իր ձեռագրով իր անհատականության, ինքնության



դրոշմն է դնում թղթի վրա առաջին անգամ:
Երբ տպագիր գիրքը դուրս մղեց ձեռագիր
գրքին, թվում էր, թե այդ
անհատականության դրոշմը պիտի
վերանար: Բայց փառք Աստծո,
գեղարվեստը եկավ լրացնելու այդ բացը: Եվ
տառարվեստի միջոցով արվեստը կրկին
վերադարձվեց տառին», - նշեց Հրաչյա
Սարիբեկյանը՝ ընդգծելով, որ տառը միայն

ձև չէ, տառատեսակների մշակումը լուրջ ուսումնասիրություն է և լուրջ բովանդակություն ունի իր խորքում:

Հայկական տառարվեստի ցուցադրությունը բաց է մեկ շաբաթ: Մուտքն ազատ է:

